ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» հուլիսի 2011թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3–րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Թույլատրել Երևանի քաղաքապետին «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշռում ընդգրկված առանց հաշվեկշռային արժեքի 2 հատ Պենտիում-3 համակարգիչները նվիրել ՀՀ «Արցախյան պատերազմի մասնակից կանանց» հասարակական կազմակերպությանը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Արցախյան պատերազմի մասնակից կանանց» հասարակական կազմակերպության 23.06.2011թ. հ.01/132-3 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ Երևանի քաղաքապետարանի օգտագործման ենթակա, սակայն քաղաքապետարանի կողմից չօգտագործվող գույքից օգնության կարգով տրամադրել կազմակերպությանը: Աշխատակազմի քարտուղարության տրամադրության տակ /պահեստում/ կա առանց հաշվեկշռային արժեքի 2 հատ Պենտիում-3 համակարգիչներ, որոնք ներկայումս չեն շահագործվում և առաջարկվում է դրանք նվիրել վերոհիշյալ կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու ««Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշռում առկա 2 հատ Պենտիում-3 համակարգիչներ նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու ««Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշռում առկա 2 հատ Պենտիում-3 համակարգիչներ նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ